



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 11 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2023

ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
 քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
 Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքես զիս սրբէ:
 Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չեղեր:
 Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր, գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
 ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես. իրաւացի ես, ինչ պատիժ ալ սահմանես:
 Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ:
 Սակայն դուն, Տէր, որովհետեւ մարդուս սրտին մէջ ճշմարտութիւնը կ'ուզես տեսնել,
 ծածուկ կերպով իմաստութիւնդ յայտնեցիր ինձի:
 Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,
 լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
 Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
 եւ փառապաճ ոսկորներս պիտի ցնծան:
 Նկատի մի առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:
 Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,
 նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
 Ներկայութենէդ մի գրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:
 Փրկութեանդ ցնծութիւնը փութ ինձի,
 եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
 Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ, եւ մեղաւորները քեզի դառնան:
 Այս արեան պարտքէն փրկէ զիս, Աստուած, Աստուած, փրկիչս,
 եւ լեզուս ցնծութեամբ արդարութիւնդ պիտի երգէ:
 Բաց իմ շրթներս, ով Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:
 Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մաքուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուզեր:
 Ուզած զոհդ զղջումով լի հոգի մըն է, ով Աստուած,
 հեղեւաբար մի մերժեր զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:
 Բարեհաճ եղիր Սիոնի հանդէպ, որպէսզի Երուսաղէմի պարիսպները վերաշինուին:
 Այն արեւն պիտի ընդունիս քաւութեան մեր գոհերը,
 ուխտի նուէրներն ու ողջակէզները, եւ քու գոհասեղանիդ դրուած մաքղաշ ցուլերը:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ 14-19

Դաւիթ կուգէ նաեւ օրինակ դառնալ եւ վկայութեան փրկութեան որպէսզի նաեւ անօրէններուն տորվեցնէ Աստուծոյ ճամբան, եւ անօրէնները Աստուծոյ վերադառնան:

Շարունակելով, Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած զինք փրկէ այս արեան պարտքէն: Այսպէս արքայապարտութիւնը մեղքի մասին է, եւ հետաքրքրական է, որ բնագիրը մեզի կը ներկայացնէ յոգնակի փարբերակով, արիւններէն, եւ եթէ արիւն բացապարտութիւնը այսպէս մեղքին հետ կապենք, ապա կը նշանակէ, բազում մեղքերէն զինք փրկելու: Որովհետեւ Պօղոս Առաքեալ երբ կը խօսի մարդու պարտքներու մասին կը ներկայացնէ շարք մը, միայն մէկ հապ չեն, այլ փարբեր փեսակի: Դաւիթ նաեւ կրկնակի կը նշէ, Աստուած, Աստուած, իմ փրկիչս: Դաւիթ ուրիշ մէկը չունի, որ զինք կարենայ փրկել, Դաւիթ արդարացում չունի իր ըրածին, միայն խոստովանելու եւ ներում խնդրելու: Դաւիթ ոչ միայն կը խոստովանի, այլ նաեւ կը խոստանայ, Աստուծոյ արդարութիւնը երգելու: Ան կը խնդրէ, որ Տէրը բանայ անոր շրթները, որովհետեւ մեղքը նաեւ կը փակէ մեր շրթները, թոյլ չի փար արքայապարտելու, եւ սակայն ի՞նչ արքայապարտելու Աստուծոյ արդարութիւնը: Մեղքը պարճառ կըլլայ որ մեր շրթները պապանցին: Դաւիթ կ'անդրադառնայ որ իր մեղաւորութիւնը նաեւ պարճառ եղած էր որ ան չկարենար զԱստուած փառաբանելու, Անոր արդարութիւնը երգելու: Ահա կը խոստովանի իր մեղքը եւ ներում կը խնդրէ, նաեւ կը խնդրէ որ Աստուած բանայ անոր շրթները, այնպէս ինչպէս առիթով մը Քրիստոս երբ համր դիւահարը բժշկեց, անոր մեջէն երբ դեւերը դուրս ելան, ան սկսաւ խօսիլ: Մենք ալ երբ փակաւին մեղքի մէջ ենք, մեղքին ստրուկն ենք, մեր շրթները կապուած են, եւ չենք կրնար զԱստուած փառաբանել: Գեղեցիկ է երեւոյթը, երբ մկրտութեան խորհուրդի պահուն մարմնի զանազան անդամները կը դրոշմուին սուրբ միւռնով, շրթները նաեւ կը դրոշմուին, որպէսզի ամուր պահպանա ըլլան, եւ բացուին ու օգտագործուին զԱստուած փառաբանելու համար:

Երկրորդ գործնական քայլը որուն կը դիմէ Դաւիթ, զոհ մաքուցելը: Նախ Դաւիթ կ'անդրադառնայ Աստուծոյ կողմէ փրուած ու սահմանուած զոհերուն, նկատի ունենալով փարբեր փեսակի զոհերը, որոնք սահմանուած էին եւ փրուած նոյնինքն Աստուծոյ կողմէ երբ Եգիպտոսէն ելքէն ետք Աստուած թելադրած էր Մովսէսին ըստ այնմ Ահարոն իբրեւ Քահանայապետ ու անոր որդիները իբրեւ քահանաներ այդ զոհերը ընծայելու, բայց այդ բոլորը փրուած էին, որպէս շուքը գալիք ճշմարիտ զոհին: Ահա այսպէս Դաւիթ կ'անդրադառնայ, ըսելով, որ եթէ զոհ կամենայիր՝ պիտի մաքուցանէի: Դաւիթ հնարաւորութիւնը ունէր այդ զոհը մաքուցելու: Բայց քետէք, ան անմիջապէս նաեւ կը յիշէ, ըսելով, «Բայց դուն ողջակէզ չես ուզեր»: Անցեալին փրուած զոհերու փեսակներ կային, փարբեր փեսակի մեղքի դիմաց, նաեւ կար մէկ այլ զոհ մը որ կը կոչուէր՝ ողջակէզ, որ կը նշանակէ՝ ամբողջութեամբ այրել զոհասեղանին վրայ: Միւս զոհերու պարագային անոց ընծայման եղանակը փարբեր էր: Կենդանիէն բաժին մը կընծայուէր զոհասեղանին իսկ բաժին մը քահանային, բաժին մըն ալ ընծայողին ճաշակելու համար: Իսկ ողջակէզի պարագային՝ ամբողջութեամբ ընծայելու Աստուծոյ, ամբողջութեամբ այրուելու: Ուրեմն, այսպէս Դաւիթ կ'անդրադառնայ, որ մինչեւ իսկ ողջակէզ Աստուած չուզեր, այսինքն՝ չկայ որեւէ մէկ փեսակի զոհ որ կարենայ իր մեղքերուն քաւութիւն եւ թողութիւն փայ:

Ուրեմն, ի՞նչ զոհ պէտք է ընծայել: Դաւիթ կ'ըսէ. «Ուզած զոհդ զոջումով լեցուն հոգի մըն է, ով Աստուած»: Հոգի մը որ կը խոստովանի, հոգի մը որ ինքզինք ամբողջութեամբ Աստուծոյ կընծայէ, այնպէս ինչպէս ողջակէզը ամբողջութեամբ Աստուծոյ կընծայուէր: Նոյն արքայապարտութիւնը Պօղոս Առաքեալ կընէ ըսելով. «Ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ զոհասեղանին», որովհետեւ գառներու, նոխազներու արիւնը քաւութիւն եւ թողութիւն չի շնորհեր: Ահա թէ ինչու Աստուծոյ ուրիշ թանկագին զոհ մը պարտասարեց, որպէսզի մեր փոխարէն ընծայուի, իսկ մեր պարագային մեր անձերը Իրեն ընծայելու, ոչ թէ զոհուելու, այլ՝ Իր փրամադրութեան փակ ըլլալու, Իր հետ սիրոյ կապի մէջ ըլլալու: Անոր հաւատարմութեան եւ հնազանդութեան մէջ ըլլալու: Դաւիթ վարահ է, որ Աստուծոյ ուզած ճշմարիտ զոհը զոջումով լեցուն իր հոգին Աստուծոյ ընծայելն է, հետեւաբար կը խնդրէ, որ Աստուած ընդունի այդ հոգին, այդ սիրտը, որ նաեւ մեղքի պարճառով ընկճուած է:

Ի վերջոյ, Դաւիթ նաեւ կը խնդրէ որ Աստուած բարեհաճ ըլլայ Միոնի հանդէպ, որպէսզի Երուսաղէմի պարիսպները վերաշինուին: Միոնը Աստուծոյ քաղաքն էր, լեռան վրայ շինուած, ուր կ'երեւի բացայայտ: Այս պարագային, այդ Միոնը նաեւ Դաւիթ ինք է, մեզմէ իւրաքանչիւրս, ուր Աստուծոյ բնակութեան քաղաքն, որովհետեւ Աստուած որ Հոգի է, եւ միայն հոգիներու մէջ կը բնակի: Իսկ Երուսաղէմը՝ որպէս խաղաղութեան քաղաք, որուն պարիսպները փլատակ են մեղքի պարճառով:

Ուրեմն խաղաղություն գրնենք Աստուծոյ հետ, որպէսզի մեր մեղքերուն քաւութիւն ստանանք եւ ըստ այնմ պարիսպները շինուին, որպսզի այդ քաղաքը հեռու մնայ ամէն տեսակի թշնամիին յարձակումներէն: Այլապէս երբ այդ քաղաքը առանց պարիսպի է, թշնամին դիւրաւ կրնայ ներս մտնել ու քարուքանդ ընել, կողոպտել ու փճացնել: Ահա երբ մեր խաղաղութիւնը Աստուծոյ հետ վերստին կը գրնենք, այն ատեն նաեւ Աստուած ալ մեր քաւութեան գոհերը, ուժիտի նուէրները ու ողջակէզները եւ գոհասեղանին վրայ դրուած մաքղաշ ցուլերը պիտի ընդունի: